Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց»

ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկան՝ «Տեխնոլոգիա»

ԹԵՄԱ՝ «ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՄԱՐԳԱՐՅԱՆ ՆԱՒՐԱ*

ԴՊՐՈՑ՝ «Գեղհովիտի Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց»

Մարտունի - 2022

Բովանդակություն

Ներածություն 3
Գրական ակնարկ 4
Մասնագիտական կողմնորոշման հասկացությունը 4
Փորձարարական դաս 9
Մասնագիտական կողմնորոշման դասախաղ 9
Հետազոտական աշխատանք 10
Եզրակացություն 12
Գրականության ցանկ 12
Հավելված 13
Դասի պլան 1 13
Դասի պլան 2 16

Ներածություն

Հանրակրթական ուսումնական հաստատության շրջանավարտների առաջնային կրթական խնդիրներից մեկը մասնագիտության գիտակցված ընտրությունն է: Ներկայումս, ազատտնտեսական հարաբերություններով պայմանավորված՝ այն դառնում է առավել արդիական և հրատապ: Նորագույն տեխնոլոգիաների, կրթության և աշխատանքի նոր շուկաների զարգացման պայմաններում շատ մասնագիտությունների և զբաղմունքների համար ներկայացվում են նոր պահանջներ, ծնվում են նոր մասնագիտություններ, որոնց մասին սովորողներն ու նրանց ծնողներն անգամ պատկերացում չունեն: Բացի ոչ բավարար տեղեկատվությունից, կարևոր է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների նախասիրությունների և անձնային որակների բացահայտումն ու զարգացումը և նախընտրած մասնագիտության համադրումը աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջարկի հետ: Մասնագիտական ընտրությունից հետո հաջորդ կարևոր խնդիրը մասնագիտական ուսումնական հաստատության ընտրությունն է: Անձի մասնագիտական ուղղվածության ու կարողությունների բացահայտման աշխատանքները պետք է սկսել նախադպրոցական տարիքից՝ կողմնորոշման գործընթացի սուբյեկտդիտարկելով ոչ թե միայն խորհրդատու մասնագետին,այլ ներառելով բոլոր ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող անձանց՝ առարկայական ուսուցիչներ,մանկավարժներ,հոգեբաններ,ծնողներ, գործատուներ: Մասնագիտական կողմնորոշման հիմնահարցերը հասարակական հետաքրքրության են արժանացել միայն 19-րդ դարի վերջերից: Այն հանգամանքը,որ իր ընդունակություններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրած անհատը ավելի մեծ օգուտ բերում իրեն և հասարակությանը, հիմք է դարձել մասնագիտական կողմնորոշման,մասնագիտության ընտրության գործընթացների գիտական հիմնավորման, մեթոդաբանության մշակման անհրաժեշտության համար: Մի կողմից դա աշխատաշուկայի, զբաղմունքների մասնագիտությունների, մասնագիտական կրթության համակարգի ուսումնասիրության հարց է,մյուս կողմից՝ անձի անհատականության,նրանց հետաքրքրությունների ,ցանկությունների ,հակումների և ընդունակությունների ուսումնասիրման մեթոդների, դրանցով ստացված տվյալների հիման վրա նպատակահարմար ու պրոֆեսիոնալ խորհրդատվության իրականացման համակարգի ստեղծման ու կիրառման: Տարբեր երկրներում գործում են մասնագիտական կողմնորոշման և

մասնագիտական խորհրդատվության տարբեր համակարգեր և հավաքագրված ինֆորմացիան տարածվում է գրքերի, ծալ թերթերի , պարբերականների և էլեկտրոնային կայքերի միջոցով:

Գրական ակնարկ

Մասնագիտական կողմնորոշման հասկացությունը

Մասնագիտական ընտրության շեմին կանգնած մարդիկ տարբերվում են շրջապատող աշխարհի պահանջներին համապատասխան իրենց հնարավորությունները գնահատելու և իրենց ճանաչելու ձգտմամբ: Մասնագիտական ինքնագիտակցության զարգացման հարցում առավել զգայունակ են հատկապես ավագ դպրոցականները:Սակայն մասնագիտության ընտրությունը մասնագիտական կայացման բարդ, երկարատև, շարժական ու հակասական գործընթացի միայն սկիզբն է: Այդ գործընթացում Տ. Վ. Կուդրյավցևն առանձնացնում է չորս շրջան.

1. Մասնագիտական մտադրությունների ծագում և ձևավորում: Դրա հաջողի իրականացման հոգեբանական չափորոշիչը՝ աշխատաշուկայի, հասարակական պահանջմունքների և անձի մասնագիտական պահանջմունքների միջև համապատասխանություն գտնելն է:

2. Մասնագիտական կրթություն և դաստիարակություն: Սրա հաջողության հոգեբանական չափորոշիչը անձի մասնագիտական ինքնորոշումն է, այսինքն՝ իր հանդեպ վերաբերմունքի ձևավորումը՝որպես ընտրված մասնագիտության ու մասնագիտական ուղղվածության սուբյեկտի:

3. Ակտիվ ներխուժում մասնագիտական միջավայր և մասնագիտական պարտականությունների կատարում: Սրա իրականացման հաջողության հոգեբանական չափորոշիչը մասնագիտության ակտիվ տիրապետումն է իրական աշխատանքային գործընթացի ու արտադրական հարաբերությունների պայմաններում և իրեն գտնելը աշխատանքային կոլեկտիվների համակարգում:

4. Անձի հնարավորությունների և մասնագիտական ձգտումների իրականացում ինքնուրույն աշխատանքում (լրիվ կամ մասնակի)[1]:

Հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ուսուցման և դաստիարակության գործընթացների անբաժան մասն է, որոշակի առումով նաև մանկավարժական գործընթացի բնականոն շարունակությունը, հանրակրթության տրամաբանական ավարտը: Մասնագիտության ընտրության հարցում խորհրդատվությունը նպատակ ունի ապագա մասնագիտության համար առավել անհրաժեշտ առարկաների ավելի խորը ուսումնասիրությունը, նախադրյալներ ստեղծելու աշխատանքային միջավայրին, մասնագիտությանը արդյունավետ հարմարմանը, նաև ապագայի նկատմամբ տեսանկյունից վստահության ձևավորմանը: Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկաֆիզիոլոգիական գործընթաց է, որը կոչված է նպաստելու անձի կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը՝ բացահայտելով և զարգացնելով վերջիններիս անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, հետաքրքրությունները և հակումները, ինչպես նաև ձևավորել աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք շուկայական հարաբերությունների պայմաններում: Հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների հիմնական նպատակը սովորողների կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը նպաստելն է, ինչը հնարավոր է ձեռք բերել հետևյալ խնդիրների լուծման արդյունքում՝

- տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն սովորողի նախասիրություններին, հակումներին, անձնային որակներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,
- ձևավորել աշխատանքի և հասարակական հարաբերությունների նկատմամբ համարժեք վերաբերմունք,
- նպաստել կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության միջոցով ինքնազբաղվածության ապահովմանն ուղղված գիտելիքների, կարողությունների ձևավորմանը,
- հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդներով բացահայտել սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ իմացական գործընթացների առանձին հատկանիշները, խառնվածքը,

[1] Կուդրյավցև Վ.Տ. Ճանապարհներ. Նախադպրոցական կրթության զարգացման նախագծի հայեցակարգային հիմքերը / Վ.Տ. Կուդրյավցև. - Մ.: Ventana-Graf, 2007

բնավորությունը, ընդունակությունները, նախասիրությունները, հակումները, հետաքրքրությունները, պահանջմունքները, դրդապատճառները,

- կազմակերպել և անցկացնել խմբային դասընթացներ՝ ուղղված կարիերայի պլանավորման հմտությունների զարգացմանը,
- խոցելի սոցիալական խմբերի սովորողների հետանցկացնել անհատական աշխատանք՝ ուղղված աշխատաշուկամուտք գործելու խոչընդոտների բացահայտմանն ու դրանց հաղթահարմանը
- ձևավորել համագործակցության ճկուն համակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (արհեստագործական, միջին և բարձրագույն մասնագիտական), ինչպես նաև գործատուների, զբաղվածության և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, շահագրգիռ այլ կառույցների միջև:
- Ծառայությունների շրջանակն ընդգրկում է երեք հիմնական ուղղություն՝ տեղեկատվության տրամադրում, խորհրդատվություն և կողմնորոշում:

Տեղեկատվություն. տրամադրում ճշգրիտ թարմ տեղեկատվության փոխանցում մասնագիտության ընտրության և կարիերայի (մասնագիտության, մասնագիտական ուսումնական հաստատության, զբաղմունքի, աշխատատեղի, ձեռնարկատիրական գործունեությունսկսելու և այլնի) հնարավորությունների, մասնագիտական առաջխաղացման ուղիների և ենթական հնարավոր տարբերակների, ինչպես նաև անհրաժեշտաջակցության և խորհրդատվությունորոնելու և գտնելու վերաբերյալ:

Խորհրդատվություն. հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդների կիրառմամբ անձին տրամադրվող աջակցությունէ ստացված տեղեկատվությունը իմի բերելու, հասկանալու, մեկնաբանելու, գնահատելու և այլ որոշակի իրադրության մեջ համապատասխանաբար կիրառելու հարցերում:

Կողմնորոշում. անաչառ և անկողմնակալ կողմնորոշման ծառայությունն և մասնագիտական աջակցությունն՝ նպատակունենալով օգնել անձին ինքնորոշվել, հասկանալ ու իր անձնային հնարավորությունների և նախասիրությունների անհամապատասխանության պատճառները, հաղթահարել խոչընդոտները կոնֆլիկտները լուծել ու ձեռք բերել նոր տեսակետներ, ունենալ առաջընթաց: Մասնագիտական կողմնորոշման գործընթացի բաղադրիչներից հատկապես կարելի է առանձնացնել՝

1. Մասնագիտական իրազեկումը, որը ներառում է մասնագիտությունների և զբաղմունքների, աշխատաշուկայի, կրթություն ստանալու հնարավորությունների և պայմանների մասին տեղեկատվության տարածումը:

2. Մասնագիտական հետազոտումը, որը մասնագիտական կողմնորոշման ծառայությունների նպատակով անձնի ուսումնասիրումն է: Այս գործընթացում բացահայտվում են անձնային առանձնահատկությունները, արժեքային կողմնորոշումները, հետաքրքրությունները, ընդունակությունները, կարիքները, մասնագիտական նախնական ուղղորդվածությունը:

3. Մասնագիտական խորհրդատվությունը, որը նպատակ ունի բացահայտել անձնի անհատական առանձնահատկությունների և այս և այլն զբաղմունքի /մասնագիտության/ պահանջների համապատասխանությունը: Արդյունքում սովորողը պետք է սպառիչ պատասխաններ ստանա իրեն հետաքրքրող մասնագիտության, այդ մասնագիտությամբ կրթություն ստանալու հնարավորությունների և իր անահատական հոգեբանական առանձնահատկություններին համապատասխանության վերաբերյալ: Այս գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով կարելի է կազմակերպել այցելություններ տարբեր աշխատատեղեր, հանդիպումներ տարբեր մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսների հետ, մասնակից դարձնել մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպած միջոցառումների, հանդիպումների և այլն: Այս փուլում, ընդհանրացնելով մասնագիտական նախնական դիագնոստիկայի արդյունքները և տեղեկատվության հիման վրա ստեղծված պատկերացումները, յուրաքանչյուր անձին տրամադրվում է մասնագիտական խորհրդական եզրակացություն:

4. Մասնագիտական ընտրությանը, որի նպատակն է բացահայտել անձի մասնագիտական համապատասխանությունը, պիտանելիությունը այս կամ այն մասնագիտությունը, աշխատատեղին, զբաղմունքին, մարդու հարմարվողականության մակարդակը կոնկրետ աշխատանքին, զբաղմունքին:

5. Սոցիալ-մասնագիտական հարմարումը, ակտիվ գործունեության միջոցով անձնի հարմարվումն է սոցիալական նոր միջավայրին, աշխատանքի պայմաններին և կոնկրետ մասնագիտությանը: Մասնագիտական հարմարեցման փուլի հաջողությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների, մասնագիտության գիտակցված ընտրության արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշներից մեկն է:

6. Մասնագիտական դաստիարակությունը անձի մեջ ձևավորում է պարտավորվածության, պատասխանատվության զգացումներ, ինքնուրույն որոշում կայացնելու, ընտրություն կատարելու կարողություններ: Մասնագիտական կողմնորոշումն անմիջականորեն կապված է անձի արժեքային կողմնորոշումների, որոնցում հավասարապես ներառվում են՝ անահատական և՝ հասարակական արժեքները: Յուրաքանչյուր անհատ ձգտում է ընդօրինակել այն արժեքները, որոնք առավել ապես համապատասխանում են իր նպատակներին և հետաքրքրություններին: Մասնագիտական գործունեությանը վերագրում են հետևյալ արժեքները՝

- ինքնահաստատում հասարակության մեջ և սոցիալական միջավայրում,
- հեղինակություն աշխատավայրում, մասնագիտական շրջանակներում,
- ծանոթների, ընկերների կողմից ճանաչում, ինքնադրսևորում և ինքնակատարելագործում, ինքնաբավարարվածություն,
- իմացություն, կարողություններ և հմտություններ, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցում,
- քննադատական մտածողություն,
- նյութական արժեքներ,
- սոցիալական դիրք, կարիերայի առաջխաղացման հնարավորություն, անձի պահանջմունքների բավարարվածություն:

Այսպիսով մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կարևոր նախապայման է անձի դիագնոստիկան, ստացված տվյալների վերլուծությունը, ինչի հիման վրա խորհրդատու մասնագետը կազմում է նրա հետ աշխատանքի անհատական ծրագիրը: Վերջինս բնականաբար կընձեռի առավել հաջողական և նպատակային խորհրդատվության հնարավորություն: Նպատակահարմար է մասնագիտական կողմնորոշման աշխատանքի անհատական և խմբային ձևերի կիրառումը՝ տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրինակ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների համար անհրաժեշտ է տարանջատել տարրական, հիմնական և ավագ դպրոցի աշակերտներին կամ նրանց խմբավորել ըստ տարիքի: Աշակերտներին մասնագիտական կոմնորոշման ծառայությունների արդյունք է՝

- սովորողին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը և ուղղորդումը,
- սովորողի կողմից նախընտրած մանսագիտության հիմնավորումը,
- աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը,

- սովորողի ինքնորոշումը,
- կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության մասին առաջնային իմացությունը; Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների արդյունքը գնահատելի է, եթե առկաեն ստորև բերված հիմանական հարցերի պատասխանները՝ • ընտրե՞լ է արդյոք սովորողը մանսագիտություն,
- ի՞նչն է ազդել ընտրության վրա,
- նաունի՞ համապատասխան տեղեկություն իր նախընտրած մասնագիտության մասին,
- համապատասխանու՞մ է այն իր հետաքրքրություններին,
- նախընտրած մասնագիտությունը համապատասխանու՞մ է սովորողի ֆիզիկական առողջությանը,
- արդյո՞ք ծնողների կողմից ընդունելի է նրաընտրությունը[2]:

Փորձարարական դաս

Մասնագիտական կողմնորոշման դասախաղ

Վարժություն «Լավագույն մոտիվը»

Նպատակը. Օգնել մասնակիցներին գործնականում հասկանալ մանսագիտության ընտրության իրենց մոտիվը:

Տարիքային խումբը 13 և բարձր

Տևողությունը. 30 րոպե

Ընթացքը. Մեր խնդիրն է ընտրել մասնագիտության ընտրության առավել ճիշտ մոտիվը, այսինքն՝ այն հիմանական պատճառը, որով մարդիկ պետք է առաջնորդվեն իրենց մասնագիտությունն ընտրելիս: Այդ նպատակով

[2] Մասնագիտական կողմնորոշման ձեռնարկ», Ե., 2014, 27-43 էջ:

դասընթացավարը կարդում է երկուական մոտիվ, մասնակիցները քննարկման միջոցով, հնարավոր է նաև քվեարկությամբ պետք է ընտրեն, թե որ մոտիվն է ավելի լավ:

Մոտիվների ցանկը ներառում է 13 արտահայտություն՝

1. Հայտնի դառնալու և փառքի հասնելու հնարավորություն:
2. Հնարավորություն շարունակելու ընտանեկան ավանդույթները:
3. Ընկերների հետ ուսումը շարունակելու հնարավորություն:
4. Մարդկանց ծառայելու հնարավորություն:
5. Աշխատավարձ:
6. Աշխատանքի ընդունվելու դյուրինությունը:
7. Աշխատանքի հեռանկարային լինելը:
8. Սեփական հնարավորություններ ցուցադրման հնարավորություն:
9. Մարդկանց հետաքրքվելու հնարավորություն:
10. Բովանդակությամբ բազմազան, տարաբնույթ աշխատանք:
11. Աշխատանքի ստեղծագործ բնույթը, բացահայտումներ անելու հնարավորություն:
12. Բարդ, դժվար մասնագիտություն
13. Մաքուր, թեթև, հանգիստ աշխատանք[3]:

Դասընթացավարը կարդում է 1-ին և 2-րդ, 3-րդ և 4-րդ,... և այլն, 12-րդ և 13-րդ մոտիվները, որից հետո ցանկում մնում է 8 մոտիվ: Նույն կերպ կարդում է նաև այս ցանկը այնքան, մինչև մնամեկը:

Դասավանդման կիրառելի մեթոդներն են՝ ԽԻԿ- (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում), Խճանկար, , Տաձև մեթոդ:

Հետազոտական աշխատանք

[3] Գևորգյան Հ. «Կարիերան ավելին է, քան զուտ աշխատանքը»: Ե., 2011, 15-20 էջ

Հետազոտություն եմ իրականացրել Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի Ալ. Մյասնիկյանի անվան համար 1 միջնակարգ դպրոցի,7-րդ դասարանցիների մոտ,քանի որ այդ տարիքային խումբն է ավելի լուրջ ուսումնասիրում այդ թեման տեխնոլոգիաառարկայի շրջանակներում: Դասալսումներ եմ իրականացրել տեխնոլոգիայի ուսուցչուհի Հովհաննիսյան Մարինեի մոտ՝ տղաների խումբ : Ուսումնասիրել եմ նաև նույն տարիքի աղջիկների խումբը ,որտեղ ես եմ դասավանդում : Ուսումնասիրությունները ցույց տվեցին ,որ աշակերտների գերակշիռ մասը կողմնորոշված չէ ավագ դպրոցում ինչ ուղղությամբ է շարունակելու ,իսկ կողմնորոշվածների մեծ մասը ընտրությունը կատարել է ծնողների ուղղորդմամբ : Ծնողների կողմնորոշումը պայմանավորված է մոդայիկ մասնագիտություններով ,կամ իրենց չիրականացած երազանքներով: Ծնողների մեծ մասն էլ չի գիտակցում և չունի համապատասխան գիտելիքներ և ինֆորմացիա աշխատաշուկայի վերաբերյալ : Պատճառը կրթական համակարգի թերացումն է այդ կարևորագույն թեմայի շուրջ : Առարկան մանրակրկիտ ուսումնասիրվում է տեխնոլոգիաառարկայի դասավանդման բոլոր տարիքային խմբերում ,բայց չկան պրակտիկ դասընթացներ ,որոնց դերը որոշիչ է ճիշտ մասնագիտության ընտրության հարցում : Օտար երկրներում , մասնավորապես եվրոպայում ,միջին դպրոցից սկսած ,աշակերտները ունեն հնարավորություն ,ամեն տարի մասնակցել նախընտրած ոլորտում պրակտիկ դասերի,որը որոշիչ դեր է ունենում ավագ դպրոցում ավելի հիմնավորված ուղղություն ընտրելու ,որը ավելի քիչ տոկոսային հարաբերությամբ ենթակակլինի փոփոխման : Իհարկե մենք՝ ուսուցիչներս,փորձում ենք տեսականորեն տալ առավելագույն գիտելիքներ,բայց աչքը պիտի տեսնի ,ձեռքը շոշափի ,ուսեփական փորձը ունենա:

Աշակերտների քանակ՝ 36

Կողմնորոշված՝ 6

Ապակողմնորոշված՝ 9

Ծնողների որոշում՝ 21

Եզրակացություն

Ժամանակակից աշխարհը առանց տեխնոլոգիական առաջընթացին համահունչ գիտելիքների անհնար է պատկերացնել : Զարմանալի է,որ դպրոցներում առարկան երկրորդային,եթե ոչ երրորդային է համարվում,բայց կատարված հետազոտությունները և կյանքի փորձը ցույց է տալիս ,որ սա առաջնային առարկաներից է ,որ մարդ առանց ձեռքի շնորքի՝ առակներ ,հեքիաթներ ,ասույթներ,«Արհեստավորը մինչև կեսօր է սոված մնում »,տարածության մեջ ճիշտկողմնոշվելու,կյանքի հմտություններ ունենալու չի կարող գոյատևել : Թեման շատարդիական է ,թեպետ ուսումնասիրվում է բավական երկար ժամանակ ,բայց մեր երկերում չունի պրակտիկ կիրառում և բանիմաց կադրեր : Ոլորտում կան բազում անելիքներ՝ համագործակցում արտադրական ձեռնարկությունների հետ,տարբեր ոլորտների գրասենյակների հետ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ,հոգեբանական կենտրոնների հետ,ծնողների հետ: Գործատուին պետք է հասցնել այն ինֆորմացիան,որ իր ներդրումը աշակերտի ,ուսանողի պրակտիկ գործունեության մեջ շահավետգործարք է առաջին հերթին իր համար՝ կունենաարդեն իսկ փորձով ապագաաշխատակից ,ով կողմորոշված է , հմուտ ,և ամենակարևորը՝ սիրում է իր մասնագիտությունը:Եթե մարդը իր գործից հոգևոր բավականություն է ստանում ,կլինի լավագույն մասնագետը:

Գրականության ցանկ

1. Գևորգյան Հ. «Կարիերան ավելին է ,քան զուտաշխատանքը »: Ե. , 2011, 15-20 էջ :
2. Կուդրյավցև Վ.Տ. Ճանապարհներ. Նախադպրոցական կրթության զարգացման նախագծի հայեցակարգային հիմքերը / Վ.Տ. Կուդրյավցև. - Մ.: Ventana-Graf, 2007
3. Մասնագիտական կողմնորոշման ձեռնարկ» , Ե . , 2014, 27-43 էջ:

Հավել ված

.

Դասի պլան 1

Ուսուցիչ՝ Մարգարյան Նաիրա

Առարկա՝ Տեխնոլոգիա	
Դասարան՝7- րդ	**Ուստարի 2022-2023**
Բաժին	**Մասնագիտական կողմնորոշում**
Թեմա	**Մասնագիտության ընտրման կանոնները**
Բաժնի նպատակը	Բացատրել՝ • ինչ է մասնագիտական կողմնորոշումը • Ինչ է նշանակում ճիշտ մասնագիտություն ընտրելը • Ինչ խմբերի են բաժանվում մասնագիտությունները

Դասի նպատակը	• Ինչպես ընտրել մասնագիտությունը • Ինչ կարևորություն ունի մասնագիտության ճիշտ ընտրությունը • Բացատրել մասնագիտության ընտրության բանաձևը
Վերջնարդյունքներ	Աշակերտները կարողանան հասկանալ՝ • Աշխատանքը պետք է լինի հաճելի ,ոչ թե հոգս,(Ուզում եմ): • Ունենալ տվյալ մասնագիտությամբ աշխատելու որակներ(Կարող եմ) • Որ իրենց ընտրած աշխատանքը աշխատաշուկայում պետք է լինի նաև պահանջված(Պետք է):
Ընդհանրական խաչվող հասկացությունները:	Մասնագիտական հետաքրքրություն,պահանջարկ,առողջական վիճակի կարողություն:
Միջառարկայական կապերը:	Ինֆորմատիկա,Կենսաբանություն,Մաթեմաթիկա, Հասարակագիտություն
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ:	Հարցաթերթիկներ, գրիչներ, պրոյեկտոր, համակարգիչ, ինտերնետային կապ:
Ուսուցման մեթոդներ:	• ԽԽԿ- խթանում, իմաստի ընկալում, կշռադատում • Հանկարծ • Դաշնակ մեթոդ
Գործողություններ և առաջադրանքներ	Ներկայացված թեմայի ուսումնասիրություն ,վերլուծություն և քննարկում
Անցկացման վայրը	Տեխնոլոգիաի դասարան

Գնահատում	Իրականացվում է ձևավորող գնահատում ,ինքնագնահատում , փոխգնահատում:

Դասի ընթացքը

Նախապատրաստական մաս 5-րոպե	Կատարել հաշվառում:	
Ներկայացնել և քննարկել մոտիվների ցանկը 30-րոպե	Աշակերտներին ներկայացնեմ մոտիվների ցանկը,որը կազմված է 16 կետերից:Սկսվում է քննարկում:Աշակերտները հերթով ընտրում են կետերից մեկը և փորձում բացատրել ,թե ինչու է հենց այդ կետը մոտիվացնում իրենց:	• Աշակերտները հետաքրքրվում և տալիս են հարցեր տարբեր մասնագիտութ-յունների վերաբերյալ: • Աշակերտների մոտ կամրապնդվի ու կարժևորվի մասնագիտության ճիշտ ընտրման կարևորության գաղափարը: • Կբացահայտվի և կվերացվի աշակերտների կողմից սխալ ըմբռնումները տարբեր մասնագիտությունն

		երի վերաբերյալ:
Ամփոփում 5րոպե	Վերջում ես ամփոփում եմ հիմնական մտքերը, նշում ճիշտ մասնագիտության ընտրության գաղափարի կարևորությունը:	
Գնահատում	Կատարում եմ ձևավորվող գնահատում, արժևորում սովորողների ներկայացրած հարցադրումները,կարծիքները ,քննարկմանը ակտիվ մասնակցելը:	
Տնային հանձնարարություն	Գրել փոքր շարադրություն «Իմ մասնագիտությունը» թեմայով:	

Դասի պլան 2

Ուսուցիչ՝ Մարգարյան Նաիրա

Առարկա՝ տեխնոլոգիա	
Դասարան՝ 7- րդ	**Ուստարի 2022-2023**
Բաժին	**Մասնագիտական կողմնորոշում**

Թեմա	**Մասնագիտական աշխատանքի տեսակների դասակարգում**
Բաժնի նպատակը	Բացատրել՝ • ինչ է մասնագիտական կողմնորոշումը • Ինչ է նշանակում ճիշտ մասնագիտություն ընտրելը • Ինչ խմբերի են բաժանվում մասնագիտությունները
Դասի նպատակը	Բացատրել՝ • Ինչ խմբերի են բաժանվում մասնագիտությունները • Մարդ-կենդանի բնություն խումբը • Մարդ-տեխնիկա խումբը • Մարդ-մարդ խումբը • Մարդ-նշանային համակարգ խումբը • Մարդ-գեղարվեստական խումբը
Վերջնարդյունքներ	Աշակերտները հասկանան և ներկայացնեն՝ • Քանի խմբի են բաժանվում մասնագիտությունները • Մարդ-կենդանի բնություն խումբը • Մարդ-տեխնիկա խումբը • Մարդ-մարդ խումբը • Մարդ-նշանային համակարգ խումբը • Մարդ-գեղարվեստական խումբը
Ընդհանրական խաչվող հասկացությունները:	Մարդ-կենդանի բնություն խումբ,մարդ-տեխնիկա խումբ,մարդ-մարդ խումբ,մարդ-նշանային համակարգ խումբը,մարդ-գեղարվեստական խումբ
Միջառարկայական կապերը:	Կենսաբանություն, ֆիզիկա մաթեմաթիկա,ինֆորմատիկա, նկարչություն
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ:	գրիչներ, պրոյեկտոր, համակարգիչ, ինտերնետային կապ:
Ուսուցման մեթոդներ:	• ԽԽԿ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում • Հանկարծ

	• Տաֆև մեթոդ
Գործողություններ և առաջադրանքեր	Ներկայացված թեմայի ուսումնասիրություն , վերլուծություն և քննարկում:
Անցկացման վայրը	Տեխնոլոգիաի դասարան
Գնահատում	Իրականացվում է ձևավորող գնահատում ինքնագնահատում , փոխգնահատում:

Դասի ընթացքը

Նախապատրաստական մաս 5-րոպե	Կատարել հաշվառում:	
Ներկայացնել և քննարկել մասնագիտական աշխատանքի 5 խմբերը 30 րոպե	Աշակերտներին ներկայացնում եմ մասնագիտական աշխատանքի 5 խմբերը :Սկսվում է քննարկում:Աշակերտները հերթով ընտրում են խմբերից մեկը և փորձում բացատրել ,թե ինչ կարևորություն ունի այդ խմբի մասնագիտությունները մեր կյանքում:	• Աշակերտները հրցեր են տալիս տարբեր խմբերի վերաբերյալ: • Հետաքրքրվում ,թե որ խմբում ինչպիսի մասնագիտություններ են մտնում:
Ամփոփում 5րոպե	Վերջում ամփոփում եմ մասնագիտությունների հինգ խմբերը, նշում դրանց	• Կբացահայտվի ,թե որ մասնագիտությունները որ խմբում են մտնում

	կարևորությունը ճիշտ մասնագիտության ընտրության հարցում:	,տվյալ խմբի և մասնագիտության կարևորությունը մեր կյանքում: • Աշակերտների մոտ կամրապնդվի ու կարժևորվի մասնագիտության ճիշտ ընտրման կարևորության գաղափարը:
Գնահատում	Կատարում եմ ձևավորվող գնահատում, արժևորում սովորողների ներկայացրած հարցադրումները,կարծիքները ,քննարկմանը ակտիվ մասնակցելը:	
Տնային հանձնարարություն	Գրել փոքր շարադրություն մասնագիտության հինգ խմբերից որևէ մեկի մասին:	